

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ ՀՐԻՈՎՐՅԱՆ



ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ամիրովա Ռոզա Ամիրի՝ «Բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների քաղաքացիաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի Մասնավոր իրավունքի և դատավարության ամբիոնի 2026 թվականի հունվարի 22-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 3):

Մասնակցում էին՝

Իրավագիտության ամբիոնի վարիչ ի.գ.թ. Գ. Պետրոսյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.թ. Մ. Խաչատրյանը, ի.գ.թ. Ս. Իսկանդարյանը, ի.գ.թ. Դ. Սարգսյանը, Լ.Զիրոյանը, Լ. Սարգսյանը, Օ. Ներսիսյանը, Ս. Հովհաննիսյանը, Զ. Մանասարյանը, Ե. Եպիսկոպոսյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է բանկերի հետ հարաբերություններում սպառողների՝ որպես «թույլ կողմի», իրավունքների պաշտպանության ապահովման կարևորությանը, ինչպես նաև կողմերի շահերի հավասարակշռությունն ապահովելու նպատակով օրենսդրության բարեփոխման անհրաժեշտությանը:

Ատենախոսական հետազոտության արդիականությունը նախևառաջ պայմանավորված է սպառողի՝ որպես պայմանագրային հարաբերությունների տնտեսապես և տեղեկացվածության առումով «թույլ կողմի» իրավական պաշտպանվածության անբավարար մակարդակով, ինչը պահանջում է քաղաքացիաիրավական պաշտպանության ավանդական մեթոդների համապատասխանեցում արդի մարտահրավերներին: Խնդրո առարկայի հրատապությունը ավելի առանցքային է դառնում նաև օրենսդրական հասկացության հարապատի անկատարությամբ. «բանկային գործունեություն» և «բանկային ծառայություն», ինչպես նաև իրավունքների «պաշտպանության ձև» ու «պաշտպանության եղանակ» հասկացությունների իրավական սահմանումների անկատարությամբ և դրանց տարանջատման հստակ չափանիշների բացակայությամբ:

Աշխատանքի արդիականությունը հատկապես ընդգծվում է բանկային ոլորտում առավել խնդրահարույց ոլորտների՝ սպառողական վարկավորման, ավանդային և բանկային հաշվի պայմանագրերի իրավակարգավորման համալիր վերլուծության իրականացման անհրաժեշտությամբ:

Վարկային պարտավորությունների վաղաժամկետ կատարման դեպքում վճարների նվազեցման միասնական մեթոդաբանության բացակայությունը, ցպահանջ ավանդների տոկոսների հաշվարկման շուրջ ծագող վեճերը և բանկերի կողմից պայմանագրային դրույթների միակողմանի փոփոխման իրավաչափության հարցերը վկայում են այն մասին, որ գործող նորմատիվ հիմքերը դեռևս հեռու են կատարյալ լինելուց և կարիք ունեն գիտականորեն հիմնավորված բարեփոխումների:

Ժամանակակից ֆինանսական համակարգում զեղծարարության դեպքերի աճը և միջազգային պատժամիջոցների ազդեցությունը բանկային պարտավորությունների կատարման վրա առաջացրել են իրավական նոր իրողություններ, որոնց որակումը որպես անհաղթահարելի ուժ կամ առևտրային ռիսկ պահանջում է հստակ քաղաքացիաիրավական մոտեցումների մշակում: Այս համատեքստում հետազոտության հրատապությունն էլ ավելի է մեծանում բարոյական վնասի հատուցման ինստիտուտի և Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների ընդլայնման վերաբերյալ հեղինակի առաջարկած նորարարական լուծումներով, որոնք նպատակաուղղված են ոչ միայն սպառողների խախտված իրավունքների արդյունավետ վերականգնմանը, այլև դատական համակարգի բեռնաթափմանը և հանրային վստահության ամրապնդմանը ֆինանսական ինստիտուտների նկատմամբ: Այսպիսով, ատենախոսությունը ներկայացնում է բանկային ոլորտում սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված համակարգային ուսումնասիրություն, որի տեսական և գործնական արդյունքները խիստ արդիական են Հայաստանի Հանրապետության մասնավոր իրավունքի զարգացման ներկա փուլում:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք և ըստ էության համապատասխանում է ատենախոսի կողմից իր առջև դրված նպատակներին ու խնդիրներին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնք ներառում են տասներեք պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից:

Հետազոտությունը կառուցված է «ընդհանուրից դեպի մասնավորը» սկզբունքով. սկսելով բանկային ծառայությունների տեսական-հասկացութային հիմքերի վերլուծությունից՝ հեղինակը հաջորդիվ անցնում է կոնկրետ իրավահարաբերություններում առկա իրավախախտումների և դրանց կանխարգելման մեխանիզմների քննարկմանը: Այնուհետև, աշխատանքը տրամաբանորեն զարգանում է պաշտպանության սուբյեկտիվ իրավունքի, դրա իրացման ձևերի ու եղանակների համակարգային ուսումնասիրությամբ, ինչը թույլ է

6. Հեղինակի կողմից առաջադրված մոտեցումները՝ ուղղված Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների օպտիմալացմանը, ամբողջացնում են աշխատանքի գիտական նորույթը՝ հիմք ստեղծելով ոլորտի համակարգային օրենսդրական բարեփոխումների համար:

Այսպիսով, հետազոտության արդյունքում ձևակերպված տեսական դրույթները և գործնական առաջարկությունները ոչ միայն հարստացնում են հայրենական քաղաքացիաիրավական դոկտրինան, այլև ունեն էական նշանակություն իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության կատարելագործման համար:

Ատենախոսության նշանակությունը տեսական և գործնական կիրառությունների համար

Հետազոտության արդյունքների հիման վրա ձևավորված տեսական դրույթները և եզրահանգումները կարող են նպաստել բանկային օրենսդրության զարգացմանը և ամրապնդել սպառողների շահերի պաշտպանության իրավական հիմքերը: Հետազոտության արդյունքները հետագայում կարող են օգտագործվել հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների շրջանակում: Ատենախոսության հայեցակարգային դրույթները կարող են օգտակար լինել ոլորտային դասընթացների, սեմինարների, ֆինանսական գրագիտության և այլ կրթական միջոցառումների իրականացման համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում հեղինակը լիարժեքորեն օգտագործել է նորմատիվ նյութեր և տեսական-մասնագիտական գրականություն, ինչի շնորհիվ ատենախոսությունում ձևակերպված եզրահանգումները և առաջարկությունները ներկայանում են որպես կարևոր և հրատապ, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Հեղինակն ատենախոսության երրորդ՝ «Ֆինանսական ոլորտում պաշտպանության իրավունքը» վերտառությամբ գլխում, կատարելով պաշտպանության ձևերի և եղանակների տարանջատում, դիտարկվելով հիմնական հասկացությունների տարանջատման հիմնական դոկտրինալ



մոտեցումները, այդուհանդերձ զերծ է մնացել լիարժեք ներկայացնելու իր սեփական հեղինակային տեսակետը տվյալ մոտեցումների վերաբերյալ:

2. Հարգելով ատենախոսի ակադեմիական ազատությունը և գնահատելով նրա կողմից արբիտրաժային վարույթի, հաշտարարության և նոտարական գործունեության կարևորության մատնանշումն ու անդրադառնալով պաշտպանության ձևերի դասական բաժանմանը՝ այդուհանդերձ ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակի կողմից պարզաբանվեր կամ բացահայտվեր, թե ի վերջո ինչու է դրսևորվում պաշտպանության ձևերի դասական բաժանման հնացվածությունը թվայնացման պայմաններում և ինչ բացասական ռիսկերի են հանգեցնում դրանք մերօրյա իրականության մեջ:
3. Պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթն իր բնույթով առավելապես նկարագրողական շարադրանք է անկանխիկ հաշվարկների ոլորտում զեղծարարությանը հակազդելու և սպառողների իրավունքների պաշտպանությունը բարելավելու կարևորության մասին, որքան գիտական նորույթ: Հեղինակն առավել հակված է համալիր մոտեցումների ներդրմանը վերոնշյալ խնդիրների հակազդման ուղղությամբ, ինչն անխոս անվիճելի է, սակայն նման դրույթն ինքն իրենով ըստ իս չունի գիտական նորույթին բնորոշ ինքնատիպություն և յուրօրինակություն:

Եզրակացություն

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Սույն կարծիքում նշված դիտողությունները չեն ազդում **Ամիրովա Ամիրի Ռոզայի** գիտական աշխատանքի ընդհանուր դրական արդյունքի վրա:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ **Ամիրովա Ամիրի Ռոզայի՝ «Բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների քաղաքացիաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է



